Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.ysu.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 3(6), 2020

«Գիտական Արցախ» *պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:*

«Գիտական Արցախ» *պարբերականը կետեղված է www.elibrary.ru կայքում:*

*The **«Scientific Artsakh»** journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).*

*The **«Scientific Artsakh»** journal is posted on www.elibrary.ru website.*

*Журнал **«Научный Арцах»** включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).*

*Журнал **«Научный Арцах»** размещен на сайте www.elibrary.ru.*

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝
Լենա ԱՄՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր **(Տառագոնա, Իսպանիա)**
Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ջուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Կոստրոմա, ՌԴ)**
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ալֆրեդ դե ԶԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Ժնև, Շվեյցարիա)**
Սեյրան ԶԱՔԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Օլշտին, Լեհաստան)**
Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **(Մինսկ, Բելառուս)**
Վալենտինա ԼԱՊԱԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ)**
Օտտո ԼՈՒԽՏԵՐՀԱՆԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Համբուրգ, Գերմանիա)**
Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ **(Լվով, Ուկրաինա)**
Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մուշեղ ՀՈՎՍԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Դոնի Ռոստով, ՌԴ)**
Գարիկ ՔԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ՔՈՉԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 3(6), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 288 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 3-րդ (6-րդ) համարի տպագրությանն աջակցել է «SBS» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

ISSN 2579-2652

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2020

Published by the Yerevan State University Academic Council Decision

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal

EDITORIAL COUNCIL

Chairman: **Aram SIMONYAN**, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: **Avetik HARUTYUNYAN**, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: **Tehmina MARUTYAN,** Ph.D in Philology, Associate Professor

Members:
Lena ASRYAN, Doctor of History (**Tarragona, Spain)**
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (**Kostroma, Russia)**
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Irina HAYUK, Ph.D in Philosophy, Associate Professor (**Lviv, Ukraine)**
Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D in Law, Associate Professor **(Minsk, Belarus)**
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor **(Moscow, Russia)**
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (**Hamburg, Germany)**
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor **(Rostov-on-Don, Russia)**
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor **(Geneva, Switzerland)**
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor **(Olsztyn, Poland)**

Scientific Artsakh, № 3(6), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 288 pages.

The publication of the 3rd (6th) 2020 «Scientific Artsakh» journal was supported by «SBS» LLC.

Издается решением учёного совета Ереванского государственного университета

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: **Арам СИМОНЯН,** директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: **Аветик АРУТЮНЯН,** кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: **Теймина МАРУТЯН,** кандидат филологических наук, доцент

Члены:
Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук **(Таррагона, Испания)**
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор **(Ростов-на-Дону, Россия)**
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент **(Львов, Украина)**
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор **(Кострома, Россия)**
Джульетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор **(Ольштын, Польша)**
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор **(Женева, Швейцария)**
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент **(Минск, Беларусь)**
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор **(Москва, Россия)**
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор **(Гамбург, Германия)**
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 3(6), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 288 страницы.

Номер 3(6) журнала «Научный Арцах» был отпечатан при содействии ООО «SBS».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ❀ CONTENTS ❀ СОДЕРЖАНИЕ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

Արմեն Մարուքյան. Սևրի պայմանագիրը որպես պահանջատիրության իրավաքաղաքական հիմքերից մեկը.....9
Armen Marukyan. Treaty of Sevres as One of the Legal-Political Basis of Reparations
Армен Марукян. Севрский договор как одна из правовых и политических основ репараций

Սարգիս Բալդարյան. Միջերկրածովյան առևտուրն ու Հայրապետ Դի Մարտինի նամակները (նախնական դիտարկումներ) 25
Sargis Baldaryan. Mediterranean Trade and Hierapet Di Martin's Letters (Preliminary Remarks)
Саркис Балдарян. Торговля Средиземноморья и письма Айрапета Ди Мартина (предварительные замечания)

Անի Խաչատրյան. Թեքեյան մշակութային միության ԱՄՆ-ի և Կանադայի մասնաճյուղերի գործունեությունը 1980-ական թվականներին.....32
Ani Khachatryan. Activities of Branches of the Tekeyan Cultural Association in the United States and Canada in the 1980s.
Ани Хачатрян. Деятельность филиалов Культурной Ассоциации Текеян в США и в Канаде в 1980-х гг.

Միքայել Մալխասյան. Մեծ Հայքի թագավորության՝ Մոսքիկյան լեռներով ձգվող հյուսիսարևմտյան սահմանագծի խնդիրը (ըստ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության»).....40
Mikayel Malkhasyan. The Problem of the North-Western Borderline of Greater Armenia along Moschikian Mountains (According to Claudius Ptolemy's "Geography")
Микаэл Малхасян. Проблема северо-западной пограничной линии Великой Армении вдоль Мосхикских Гор (по «Географии» Клавдия Птолемея)

Վահե Սարգսյան. Ջավախքի հիմնահարցը վրաց հասարակական-քաղաքական մտքի ընկալմամբ (ըստ 1999-2009 թթ. վրացական տպագիր մամուլի նյութերի) (Մաս 1).....54
Vahe Sarkisyan. The Main Issue of Javakhk according to the Perceptions of Georgian Socio-Political Thought (Based on Georgian Print Media in 1999-2009) (Part 1)
Ваэ Саркисян. Проблема Джавахка в оценке грузинской общественно-политической мысли (по материалам грузинских печатных изданий 1999-2009 гг.) (Часть 1)

Արեգ Քոչինյան. Տերմինուս ընտրախավերի տեսությունը ամերիկյան անցումային պատմակարգի համատեքստում.....70
Areg Kochinyan. Terminus Elite Theory in the Context of American Transition Formation
Арег Кочинян. Теория элит Терминус в контексте американской переходной формации

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ

Մագդա Արսենյան. ՀՀ խորհրդարանական մշակույթի ժողովրդավարացման հիմնախնդիրները նեոքաղաքականության պայմաններում.....82
Magda Arsenyan. The Issues of Democratization of Parliamentary Culture of the Republic of Armenia in the Context of Neopolitics
Магда Арсенян. Проблемы демократизации парламентской культуры в контексте неополитики в РА

ՏԵՐՄԻՆՈՒՍ ԸՆՏՐԱԽԱՎԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՊԱՏՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*

ՀՏԴ 94(73)

ԱՐԵԳ ՔՈՉԻՆՅԱՆ
Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի համաշխարհային պատմության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
aakochinyan@yahoo.com

Հոդվածի նպատակն է տալ անցումային պատմակարգում գտնվող ընտրախավի և դրա հետ կապված հասարակական կառուցակարգերի ու գործընթացների նկարագրությունը տերմինուսի տեսության շրջանակներում, միջգիտակարգային ձևաչափով կոնկրետ օրինակի հիման վրա:

Մեր խնդիրն է ուսումնասիրել ամերիկյան անցումային պատմակարգի առանձնահատկությունները, նկարագրել դրա արդյունքում արդիական, ժողովրդավարական ու իրավական պետության ստեղծման գրավականները, բացահայտել տերմինուսի տեսության դերը վերոշարադրյալում:

Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են ինչպես համագիտական (վերացարկման, վերլուծության, համադրման, դեդուկտիվ և ինդուկտիվ հետազոտության) այնպես էլ հատուկ (պատմական հետազոտության, թոյնբիական քաղաքակրթական ալիքների տեղային կիրառման, համեմատական վերլուծության) մեթոդներ:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ հասարակությունը իր բնականոն զարգացման ընթացքում մշտապես գտնվում է ընտրախավերի հերթափոխման փակ շրջափուլի՝ տերմինուսյան փոփոխության մեջ: Սովորաբար այդ հերթափոխերը տեղի են ունենում անցումային պատմակարգերում: Ամերիկյան հեղափոխությունը հենց այդպիսի անցումային պատմակարգ է, որի արդյունքում ստեղծվում է պետական կառավարման աննախադեպ համակարգ և հասարակական համակեցության որակապես նոր ձև, որոնք իրենց հերթին արդեն ապահովում են հերթափոխման նոր՝ պարբերական ներհամակարգային ձև:

Հիմնաբառեր՝ *ընտրախավ, տերմինուս, ԱՄՆ, հեղափոխություն, անցումային պատմակարգ, կեղծ ընտրախավ, գաղութ, անկախություն, անցում:*

Ընտրախավը և կեղծ ընտրախավը *տերմինուսի* տեսության շրջանակներում

Ընտրախավ: Հասարակության քաղաքակրթական ինքնությունն ուղղորդող և այն առավել վառ կերպով արտահայտող ընկերային շերտ, որն իրականացնում է հասարակության կառավարումն ու առաջնորդումը ոչ միայն քաղաքական, այլև մշակութային, տնտեսական ու հոգևոր դաշտում: Ընտրախավի իշխանությունը համակարգային է և բոլոր ոլորտներում դրսևորվող: Ըստ Պարետտոյի՝ ընտրախավին պատկանելությունը պայմանավորված է ոչ թե արյունակցական կամ զբաղեցվող պաշտոնների առանձնահատկություններով, այլ կրթական, նպատակային, ռեսուրսային և կամային հատկանիշներով[237]: Ընտրախավին բնորոշ են ընկերային աստիճանների

---

* Հոդվածը ներկայացվել է 14.06.2020թ., գրախոսվել՝ 16.06.2020թ., տպագրության ընդունվել՝ 20.09.2020թ.:

[237] **Парето В**. Трансформация демократии, Москва, Территория будущего, 2011, С. 207.

առկայությունը, որոնց միջոցով յուրաքանչյուրն իր գործունեության արդյունքում կարող է մտնել և դուրս գալ այդ խմբից: Սովորաբար այն վառ կերպով ներկայացնում է և, որպես կանոն, նաև թելադրում տվյալ հասարակությանը բնորոշ ընկերային-հոգեբանական գծերը, վարվեցողության կանոնները, բարեվարքությունը, ճաշակը և անգամ չարի ու բարու մասին հիմնարար պատկերացումները: Ընտրախավն առաջանում է հասարակական զարգացման այն փուլում, երբ արդեն առկա է սեփական ես-ի տեղավորում հասարակական պատկանելության մեջ, և կան իշխանության ձևավորված տարրեր: Ըստ Հայզինգայի՝ ընտրախավը, որպես ընկերային խումբ, անբաժանելիորեն կապված է իշխանության և դրա նկատմամբ կամքի ֆենոմենի հետ[238]:



Գրաֆիկ 1 (հասարակության տերմինուսյան գծապատկերը) Պատմության ընթացքում սահմանաքարերը հաճախակի ընկնում էին և վերատեղադրվում շրջակայքի անտեղյակ բնակիչների կողմից արդեն ուրիշ վայրերում, երբեմն գլխիվայր շրջված

Կեղծ ընտրախավ: Ընտրախավի ֆիզիկական բնաջնջման կամ դրա բարոյական քայքայման պայմաններում առաջ եկող ընկերային շերտ, որն իր վրա է վերցնում առաջնորդումն ու մշակութային ինքնության ուղղորդումը, սակայն տապալում է կենսունակ համակեցական համակարգի ստեղծումը, կոչվում է կեղծ ընտրախավ: Բարոյական քայքայում եզրույթը վերցված է Էլիասի աշխատանքից և այստեղ օգտագործվում է նկարագրելու համար «շեղումը՝ տվյալ հասարակությունում և տվյալ ժամանակաշրջանում ընդունված բարոյական ու արժեհամակարգային նորմերից: Ընդ որում՝ շեղմանը չի հաջորդում բարոյական նոր համակարգի հիմնումը կամ հիմնված նոր համակարգը չի ապահովում համակեցության կենսունակ միջավայր»[239]: Այսպիսով՝ կեղծ ընտրախավը, չտիրապետելով բավարար մարդկային, կրթական, գաղափարական կամ այլ ռեսուրսների և չունենալով ընկերային աստիճանների համակարգերը, տապալում է իր օրինակով նոր հասարակության կառուցումն ու տանում այն կա՛մ դեպի կործանում, կա՛մ էլ լճացում: Սա տեղի է ունենում անհատի ու հասարակության անվտանգությունը, բարեկեցությունն ու բնականոն զարգացումը ապահովող նոր հասարակարգ կառուցելու կամ դրա կառուցման դեպքում հասարակությունը դրանում տեղավորելու անկարողությունից: Ընդ որում, նոր հասարակարգը չի կարող հիմնված լինել բռնության վրա, քանի որ դա արդեն իսկ բացառում է վերոնշյալ անվտանգությունն ու բարեկեցությունը և հանդիսանում նոր ռեժիմի անկարողության ցուցիչ: Մինչդեռ չկարողանալով մարդկանց տալ որակյալ կյանք՝ մշակութային, բարոյական, քաղաքական, տնտեսական, ընկերային պայմաններ, որոնք ապահովում են մարդու՝ ժամանակին համընթաց, բարեկեցիկ ու անվտանգ կենսագործունեությունը, կեղծ ընտրախավը հիմնականում արդեն հենվում է ֆիզիկական կամ հոգևոր բռնության (հոգևոր-մշակութային, բարոյական, ճաշակի ու կրթության արհեստական անկման կենտրոնացված քաղաքական կազմակերպում) վրա:

Տերմինուսի տեսություն: Տերմինուսը Հին Հռոմեական աստվածություն է, սահմանների հովանավորը: Նրա անվամբ էին կոչվում նաև սահմանաքարերը, որոնք ունեին զուգահեռանիստի տեսք: Դրանք տեղադրվում էին պետության սահմաններին՝ մի կողմով խրված լինելով հողի մեջ:

Ընտրախավը և կեղծ ընտրախավը միաժամանակ ֆիզիկապես գոյություն ունեն ցանկացած հասարակությունում: Կապված ժամանակաշրջանի, գոյություն ունեցող

[238] **Хайзинга Й.**, Хомо Луденс, Санкт-Петербург, Азбука, 2019, С. 105.
[239] **Элиас Н.**, Придворное общество, Москва, Языки славянской культуры, 2002 С. 327.

ռեսուրսների, կամքի և այլ նախապայմանների հետ՝ դրանցից մեկը ակտիվ է, իսկ մյուսը՝ լատենտ: Անցումային պատմակարգերում (հեղափոխություններ, հեղաշրջումներ և այլն) դրանք կարող են դիրքափոխվել: Այսպես, եթե մենք հասարակությունը համեմատենք տերմինուսի հետ, ապա քարի վերևինը՝ իշխող մասը, ընտրախավն է, իսկ ներքևինը՝ հողի մեջ խրվածն ու չերևացողը՝ կեղծ ընտրախավը, որոնք երկուսն էլ միաժամանակ առկա են, սակայն միայն մեկն է երևում: Եթե քարը վերցնենք և շուռ տանք, ապա դարձյալ երկուսն էլ առկա կլինեն, պարզապես չի երևա արդեն ընտրախավը. այսինքն՝ հասարակության պարուրաձև պատմության մեջ լինում է նշված երկու ընկերային խմբերի առաջնորդության (ակտիվ-պասիվ դերակատարման) հերթափոխություն: Ընդ որում, հերթափոխության օրինակները կարող են լինել ամենատարբեր ժամանակային ու գործառնական տիրույթում: Տերմինուսի օրինակի ընտրությունը պայմանավորված է ինչպես կեղծ ընտրախավի իշխանության անբնականությունը, այնպես էլ հասարակության կառուցվածքի՝ հիմնարար վտանգներով պայմանավորված անխուսափելիությունը ցույց տալու ցանկությամբ: Վերջնարդյունքում հասարակության մեջ լատենտ վիճակում գտնվող ընտրախավը պետք է ստեղծի այլընտրանք, օրինակ՝ լուսավորականների գործունեություն, որով կթոթափի կեղծ ընտրախավի ստեղծած համակարգը:

Ամերիկայի 13 գաղութները, գաղութաբնակները և հին ընտրախավը

Օվերին գրում է, որ «Ամերիկա մայրցամաքի հայտնագործումից հետո Եվրոպայում սկիզբ առավ երկու գործընթաց՝ եվրոպական բնակչության արտահոսք դեպի նոր գաղութներ և պետությունների միջև ծավալվող անզիջում պայքար՝ նոր մայրցամաքի հարստություններին տիրանալու և այն գաղութացնելու համար»[240]: Այդ անզիջում պայքարում ընդհանուր առմամբ հաղթանակող դուրս եկավ Միացյալ Թագավորությունը, որը, մի քանի անգամ հաղթելով վերադասավորումներ ապահովող պատերազմներում (Ակադիայի պատերազմ, 1701-1713 թվականների պատերազմ, Յոթնամյա պատերազմ), կարողացավ մրցակցությունից դուրս թողնել թե՛ Ֆրանսիային և թե՛ այլ Եվրոպական տերություններին: «Մինչև 18-րդ դարի 60-ական թվականները Միացյալ Թագավորությունը, զավթելով Հյուսիսային Ամերիկայի արևելյան ափի հյուսիսային հատվածի մեծ մասը և ստանալով անգլիացի գաղութաբնակների աջակցությունը, կայուն վերահսկողություն սահմանեց տեղում»[241]:

Ըստ Սեմուել Ադամսի՝ դեռևս 1620 թվականին մեկնարկելով գաղութաշինության գործընթացը՝ «Թագավորությունը սկզբնական շրջանում վարում էր գաղութաբնակների հանդեպ հովանավորչական քաղաքականություն՝ ունենալով երկու նպատակ. առաջին՝ նպաստել նոր աշխարհում անգլո-սաքսոնական և բողոքական տարրի առավելագույն տարածմանը, և երկրորդ՝ ստանալ այդ տարրի անվերապահ աջակցությունը իր՝ դեռևս թույլ դիրքերը ամրապնդելու համար»[242]:

Սակայն ժամանակի ընթացքում՝ լուծելով երկու խնդիրներն էլ և ամրապնդելով դիրքերը՝ մետրոպոլիան ձեռնամուխ եղավ նոր քաղաքականության, որ ուղղված էր գաղութների առավելագույն ֆինանսատնտեսական շահագործմանը և գաղութների ընկերային քաղաքական կյանքի վրա ամբողջական վերահսկողության սահմանմանը: 18-րդ դարը Միացյալ Թագավորությունում արդյունաբերական հեղափոխության ժամանակաշրջանն է: Եվ նոր արդյունաբերական տնտեսությունը կարիք ուներ ոչ միայն էժան հումքի, որը մշտապես ձեռք էր բերվում գաղութներից, այլև մեծ սպառման

[240] **Overy R.,** The Times Complete History of the World, Atlas of World History, London, The Times Books, 2010, p. 69-70.

[241] **Cincotta H.,** An Outline of American History, Washington, US Information Agency, 1994, Chapter 2: The Colonial Period, New England, Society, Schools and Culture

[242] **Adams S.,** The Rights of the Colonists as Man, New York, Barnes and Noble, 2012, p. 19-24.

շուկաների: Հովանավորչության (մերկանտելիզմի) քաղաքականության պատճառով գաղութները կարող էին առևտրով զբաղվել բացառապես մետրոպոլիայի հետ, գործող մի շարք սահմանափակումների պատճառով դրանք չէին կարողանում տեղում զարգացնել արդյունաբերությունը: Այդ ամենի արդյունքում գաղութները հայտնվում էին առևտրային հավասարակշռության խորը պասիվության մեջ և Թոմաս Ջեֆերսոնի գնահատմամբ՝ վերածվում էին «Մետրոպոլիայի տնտեսական հավելվածի»:[243] Առավելություններ ու մենաշնորհներ էին տրվում մետրոպոլիայից եկող առևտրականներին, պետական աջակցություն էին ստանում մետրոպոլիայի բանկիչները, վաշխառուները. այս ամենը ստեղծում էր անհավասար և ոչ մրցակցային մթնոլորտ:

Առևտուրն ընդհանրապես գտնվում էր մետրոպոլիայից նշանակվող պետական ծառայողների՝ սուպերինտենդանտների ամբողջական վերահսկողության տակ, ինչը վերոնշյալ հովանավորչության քաղաքականության շրջանակներում անհնարին էր դարձնում անգամ անօրինական առևտուրն այլ երկրների ներկայացուցիչների հետ:

Արտադրության ոլորտում գործող սահմանափակումները հատկապես վերաբերում էին նավաշինության գործին, որը Բրիտանական կայսրության սահմանների մեջ բացառապես մետրոպոլիայի մենաշնորհն էր: 1750-ականների երկրորդ կեսից պետական նպատակադրված քաղաքականության պատճառով գաղութների ֆինանսավարկային համակարգը գրեթե անկման (կոլապսի) ենթարկվեց և ամբողջովին փոխարինվեց մետրոպոլիական կապիտալի վրա հիմնվածով: Նշված համալիր քաղաքականության արդյունքում հետզհետե կրճատվում էին գաղութների բնակչության եկամուտները, ընդ որում, խոսքը գնում է բնակչության գրեթե բոլոր շերտերի մասին:

18-րդ դարի կեսերից սկիզբ էր առել տեղական ու համայնքային ինքնա–կառավարման մարմինների իրավունքների սահմանափակման քաղաքականություն, որը նպատակ ուներ հնարավորինս սահմանափակել տեղական խորհուրդների ու խորհրդարանների լիազորություններն ու առավելություն տալ մետրոպոլիայից նշանակվող նահանգապետերին:

Այդ փոփոխությունները նաև անջրպետ էին ստեղծում տեղաբնակների և պետական ծառայող հանդիսացող ընտրախավի միջև: Ընտրախավը, ֆինանսական կախման մեջ գտնվելով մետրոպոլիայից և դրանով իսկ կտրված լինելով գաղութների բնակչության ֆինանսական խնդիրներից, հետզհետե հեռանում էր բնակչությունից, հակադրվում դրան և դրա շահերը սպասարկող ընկերային խմբին և վերածվում այն շահագործող խմբի:

Այսպիսով՝ գաղութաբնակների հասարակությունում հին ընտրախավը ժամանակի ընթացքում քայքայվում է կեղծ ընտրախավի մակարդակի և ձևավորվում են նոր ընտրախավի (լատենտ ընտրախավ) սաղմ հանդիսացող ինտելեկտուալ խմբակները, որոնք ժամանակի ընթացքում պետք է գերիշխող դիրք գրավեին հասարակության մեջ:

Անցման պատմակարգի նախադրյալները, մեկնարկը և նոր ընտրախավը

Ինչպես գրում է Սիմմոնսը, դեռևս 17-րդ դարի առաջին կեսից գաղութներում սկսվում է դասական տիպի տեղական կրթական համակարգի ձևավորումը[244]: Դասական կրթական համակարգը և մասնավորապես տեղում հիմնված նոր համալսարանները դառնում են նոր տեղական ընտրախավի ձևավորման (կամ լատենտ ընտրախավի ակտիվացման) ու կազմակերպման հիմնական կենտրոնները: ԱՄՆ հիմնադիր հայրերը, հանդսիանալով նոր ձևավորվող տեղական ընտրախավի ներկայացուցիչներ և իրենց կրթությունը ստանալով տեղի դասական կրթական

[243] **Jefferson T.,** A Summary of the Rights of British America, New York, Barnes and Noble, 2012, p. 33.

[244] **Simmons L.**, Climbing Parnassus: A New Apologia for Greek and Latin, Wilmington, Delaware, ISI Books, 2002, p.14-51.

հաստատություններում, Հոլմսի ձևակերպմամբ՝ «տոգորվում էին դասական մտածողների առաջադիմական ու մարդակենտրոն գաղափարներով»[245]:

Դասական տիպի կրթությունն իհարկե չէր կարող տալ ազգային-պետական կրթական համակարգին հավասարազոր արդյունքներ, ի մասնավորի վառ արտահայտված պետական մտածողություն, սակայն «Թոյնբիական քաղաքակրթական ալիքների»[246] միջոցով այն ուսանողների շրջանում ձևավորում էր քննադատական մտածողություն, ազատական գաղափարներ, մարդասիրություն և ընդհանուր աժեքների վրա հիմված տեղական ինքնություն: Նշված արժեքներն ու կարողությունները հակադիր են միահեծան, բռնի իշխանությանն ու շահագործմանը:

Ջեյմս Օտիսը՝ հեղափոխության առաջին հրապարակախոսներից մեկը, գաղութների համար պատրաստել էր երկու կարևոր նախահեղափոխական դասական իդեալներ՝ ուշադրություն հրավիրելով հունական գաղութային քաղաքականության և հռոմեական բնական օրենքի սկզբունքների վրա: Հույներին նա ներկայացնում էր որպես գաղութների ամբողջական հավասարությունն ու անկախությունը ճանաչողների, իսկ հռոմեացիներին գնահատում այն գաղափարի համար, որ ճշմարիտ օրենքը բնության հետ ներդաշնակության գլխավոր պատճառն է և զսպումներն ու հավասարակշռությունը երաշխավորող գործնականում ամենաճիշտ պայմանը»: Հատկանշական է, որ հունական քաղաքականությունը ցույց էր տալիս ամերիկացիներին, թե ինչպես է Միացյալ Թագավորությունը պարտավոր հարգել իր գաղութներին, իսկ հռոմեական տեսլականը մատնանշում էր իշխանության սահմանափակման կարևորությունը[247]:

1764-65 թվականներին առանց այն էլ լարված վիճակը էլ ավելի է սրվում, քանի որ տնտեսական քաղաքականությունը սկսում է արդեն բացահայտորեն ոտնահարել գաղութաբնակների իրավունքները: 1764 թվականին ընդունված «Անարդար օրենքները» անհավասար հարկում էին ենթադրում ամերիկյան և մետրոպոլիայի՝ միևնույն գործունեությամբ զբաղվող տնտեսվարողների համար, դրանից զատ սահմանվում էին մի քանի նոր և մետրոպոլիայում բացակայող հարկատիպեր:

1765 թվականին ընդունվում է «Դրոշմատուրքի օրենքը», որով մաքսային ծառայությունը անցնում է զինվորական վերահսկողության ներքո և մետրոպոլիայում փաստացի հաստատված այնպիսի հիմնարար իրավունքները, ինչպիսիք են՝ մասնավոր սեփականությունը, անձնական տարածքը, անձի և կեցավայրի անձեռնմխելիությունը, ոտնահարվում են ու հանձնվում պետական պաշտոնյաների հայեցողությանը: Խստացումների այս փուլը առաջացնում է հակադրման առաջին ալիքը, որը դեռևս արտահայտվում էր ցույցերով, գործադուլներով և քաղաքային խորհուրդների կողմից մետրոպոլիա ուղարկվող բողոքներով: Այդ ամենին ի պատասխան՝ 1766-67 թվականներին պառլամենտի որոշմամբ գաղութներում տեղակայվում են զինված ուժեր:

1767 թվականին «Դրոշմատուրքի օրենքը» չեղարկվում է, սակայն փոխարենը մտցվում են այլ հարկեր: Հենց այդ շրջանում է ենթադրաբար Ջեյմս Օտիսի կողմից առաջ քաշվում «ոչ հարկմանը առանց ներկայացուցչության» թեզը[248], որը պահանջում էր գաղութների բնակչությանը վերաբերող որոշումների կայացմանը գաղութների բնակչության ներկայացուցիչների մասնակցությունը, որ ըստ էության նոր ընտրախավի խաղաղ կառուցակարգայնացման նախագիծ էր: Այս թեզը մեծ արձագանք է գտնում գաղութների բնակչության լայն շրջանակներում և տեղական ինքնակառավարման մարմիններում ու մի քանի անգամ ներկայացվում պառլամենտին: Թեզին ի պատասխան՝ Պառլամենտը դեկլարատիվ կերպով հայտարարում է դրա

[245] **Holmes L.**, The Faiths of the Founding Fathers, Oxford, Oxford University Press, 2006, p. 49.

[246] **Թոյնբի Ա.,** Հասու լինել պատմությանը, Երևան, Անտարես, 2013, էջ 216-217:

[247] **Otis J**., Rights Of The British Colonies Asserted And Proved, 1764, Online Library of Liberty, https://oll.libertyfund.org/pages/1763-otis-rights-of-british-colonies-asserted-pamphlet (13.06.2020).

[248] **Otis J**., op. cit.

անընդունելիության մասին, զգալիորեն լայնացնում նահանգապետերի լիազորությունները և չենթարկվելու պարագայում նրանց տալիս տեղական խորհուրդները ցրելու լիազորություն: Այսպիսով՝ Թագավորական իշխանությունը մերժում է նոր ընտրախավի կառուցակարգայնացման խաղաղ տարբերակը և ընտրում կեղծ ընտրախավի պաշտպանության տարբերակը՝ ճանապարհ բացելով ստեղծարար բռնության համար: Պառլամենտը ավելացրեց նաև բանակի թվակազմը՝ այն տեղակայելով արդեն գաղթուների քաղաքներում: Սա լարեց մթնոլորտը, բայց այն հատկապես թեժացավ Բրիտանական կայսրության տնտեսական դժվարություններին զուգահեռ, որոնց արդյունքում մետրոպոլիան խստացնում էր նաև իր հարկային քաղաքականությունը:

Չերչիլի գնահատմամբ՝ «Միացյալ Թագավորության վարած քաղաքականությունը հակադրվել էր գաղութների գրեթե բոլոր ընկերային խավերի շահերին և նրանց մոտ առաջ էր բերում մետրոպոլիայի դեմ ուղղված տրամադրությունների աճ»[249]:

Չնայած վարվող քաղաքականությանը և բոլոր ճնշումներին՝ գաղութները զգալի հաջողության հասան տնտեսական առաջնթացի ասպարեզում: Սկսվեց ձևավորվել ամերիկյան ազգային շուկան: Միաժամանակ Բեյլինի պնդմամբ՝ «գնում էր նոր տեղական մշակույթի ձևավորումը և տեղի էր ունենում ազգային ինքնագիտակցության աճ»[250]: Սա նոր, ամերիկյան պետականակիր ազգի ձևավորման գործընթացն էր: Շուտով չնայած բոլոր սահմանափակումներին՝ ամերիկյան բուրժուազիան պետք է դառնար մետրոպոլիայի բուրժուազիայի տնտեսական մրցակիցը նավաշինության, առևտրի, ապա նաև՝ մանուֆակտուրայի բնագավառում:

1772 թվականին «Ազատության Որդիներ» կազմակերպության կողմից ստեղծվում է գրագրության կոմիտե, որը նախ բանախոսների, ապա և հեղափոխականների համար դառնում է կապի ու հաղորդակցության արդյունավետ միջոց: Այս կազմակերպությունը հնարավորություն է տալիս 13 գաղութների մտավոր շրջանակներին գտնվելու մի հարթության և մի իրականության մեջ, ինչն իր հերթին, ըստ Բեյլինի, «մեծ ազդեցություն է ունենում շարժման հետագա կազմակերպվածության վրա»[251]:

Ընդհանրապես կազմակերպվածությունը անցումային պատմակարգում գտնվող այս հասարակության բնորոշ գծերից մեկն է: Նախ՝ դեռ 18-րդ դարի կեսերից սկսվել էր արհմիությունների և գիլդիաների ձևավորման գործընթացը, որը նոր և շատ ավելի մեծ թափ է առնում «Դրոշմատուրքի օրենքի» դեմ պայքարի արդյունքում: Այս կազմա–կեր–պությունների գործունեության ընդարձակման, միջգաղութային համագործակցության ու քաղաքականացման արդյունքում են ձևավորվում քաղաքական-հեղափոխական բազմաթիվ գաղտնի ակումբներ ու կազմակերպություններ: Առավել նշանավորներից են «Ազատության որդիներ»-ը, «Vox Populi»-ն, «Նեպտունի որդիներ»-ը, «Ազատության դուստրեր»-ը. Սրանք, նախ ձևավորվելով որպես գաղտնի խմբակներ, անդամներ ձեռք բերելով և հզորանալով, վեր էին ածվում նոր ընտրախավին սատարող հզոր շարժումների: Շարժումներ, որոնք առաջ էին տանում միջգաղութային համագործակցության և հեղափոխության գաղափարները: «Ազատության որդիներ»-ն են առաջին միջգաղութային համաժողովների կազմակերպիչները, որոնց շնորհիվ բոլոր գաղութների ներկայացուցիչները առաջին անգամ հնարավորություն ստացան միասնական քաղաքական օրակարգ քննարկելու:

Սակայն քաղաքական պայքարի առաջամարտիկներն ու նոր ընտրախավի կառուցակարգային սաղմերն անշուշտ տեղական քաղաքային խորհուրդներն էին, որոնք

---

[249] **Churchill W.**, The Age of Revolution, A History of the English-Speaking Peoples, Volume 3, New York, RosettaBooks, 1957, Book 8, Chapter 4.

[250] **Bailyn B.**, The Ideological Origins of the American Revolution, Cambridge, Massachusetts, 1967, p. 94.

[251] **Bailyn B.**, op. cit., p. 198-203.

թե՛ կրթությամբ և թե՛ գործունեությամբ հասարակության ամենաառաջադեմ ու ամենակրթված թևն էին կազմում[252]:

Այսպիսով՝ ամերիկյան հասարակությունը մտել էր անցումային պատմակարգի փուլ, երբ նախկինի պես այլևս հնարավոր չէր ապրել, ու ձևավորվում էին համակեցության նոր կանոններ:

Ամերիկյան ստեղծարար բռնությունը և անցումային պատմակարգը

Դեռևս 1773 թվականին պառլամենտը որոշում էր կայացրել Արևելահնդկական ընկերությանը թույլ տալ որոշ ապրանքների անմաքս ներմուծում 13 գաղութների տարածք, ինչը տնտեսական դժվարություններ էր ստեղծում գաղութաբնակների համար: Մի քանի անգամ այս մասին բարձրաձայնվեց, սակայն բոլոր բողոքները մնացին անպատասխան: 1773 թվականի դեկտեմբերի 16-ին Բոստոնի բնակիչները հարձակվեցին թեյով բեռնված նավերի վրա, որոնք եկել էին Հնդկաստանից, և ծովը թափեցին ողջ բեռը՝ պատճառելով ահռելի ֆինանսական վնասներ: Այս իրադարձությունը պատմության մեջ հայտնի է «Բոստոնյան թեյախմություն» անունով:

Ի պատասխան՝ Միացյալ թագավորության կառավարությունը փակեց Բոստոնի նավահանգիստը և սկսեց նախապատրաստվել գաղութներ մեծ զորք ուղարկելուն: 1774 թվականի սեպտեմբերի 5-ին հեղափոխական միությունների (ասոցիացիաների) և քաղաքային խորհուրդների մեծ ջանքերի շնորհիվ Ֆիլադելֆիայում հրավիրվեց առաջին մայրցամաքային համաժողովը: Համաժողովի որոշումները կարելի է ամփոփել երեք խմբերի մեջ՝

1. «Անտանելի օրենքների» չեղարկում,
2. Ոչ մի հարկում առանց ներկայացուցչության,
3. Հավասար իրավունքներ գաղութաբնակների և մետրոպոլիայի ներկայացուցիչների միջև[253]:

Համաժողովում որոշում է կայացվում իրականացնել բոյկոտ և կասեցնել առևտուրը մետրոպոլիայի հետ, սակայն անկախության պահանջ դեռևս չի դրվում: Համաժողովը ժամանակավորապես իր վրա էր վերցնում գաղութների կառավարման խնդիրները, տեղերում ստեղծվում են կոմիտեներ ու կոնվենտներ, որոնք զբաղվում են տեղական ու տարածքային կառավարման խնդիրներով:

Տեղերում սկսում են արագորեն ձևավորվել ինքնապաշտպանական ուժեր: Միացյալ թագավորությունը, ի պատասխան, Ամերիկա ուղարկեց զորքեր ու նավատորմ: Գաղութաբնակները դիմեցին զենքի: 1775 թվականի ապրիլի 19-ին Քոնքորդի և Լեքսինգթոնի մոտ թագավորական զորքերը ծանր կորուստներ կրեցին: Համաժողովը մայրցամաքային բանակի գլխավոր հրամանատար նշանակեց Ջ. Վաշինգտոնին: Պատերազմի առաջին տարիներին ամերիկացիները անհաջողության մատնվեցին և կորցրին Նյու Յորքը (1776) և Ֆիլադելֆիան (1777), բայց պատերազմի ընթացքում հետզհետե ամերիկյան բանակի մարտունակությունը բարձրանում էր, բռնությունը, որ գործադրվում էր հասարակության դեմ, խաղում էր կատալիզատորի դեր և արագացնում էր հասարակության անցման ու նոր ազգի ձևավորման գործընթացները: 1777 թվականի հոկտեմբերի 17-ին Սարատոգայի մոտ ամերիկա–ցիների տարած հաղթանակը նպաստեց ԱՄՆ-ի ռազմական ու միջազգային դրության բարելավմանը: 1781 թվականի հոկտեմբերին բրիտանացիները պարտություն կրեցին Յորկթաունում, պատերազմի ակտիվ փուլն ավարտվեց: 1783 թվականին սեպտեմբերի

[252] **Жидков О. А.**, **Крашенинникова Н. А.**, История государства и права зарубежных стран, ч. 2, Москва, Норма, 2004, С. 25.

[253] **Address of The First Continental Congress to The Inhabitants of the Several Anglo-American Colonies**, New York, Barnes and Noble, 2012, p. 54-65.

3-ին Վերսալում կնքվեց հաշտության պայմանագիր, որով Միացյալ Թագավորությունը ճանաչեց Ամերիկայի Միացյալ Նահանգների անկախությունը:

Սեմուել Ադամսի պնդմամբ՝ «ամերիկացիները պատերազմում հաղթեցին աշխարհի հզորագույն կայսրությանը, բայց դա արդյունք էր ոչ թե ուժային հավասարության, այլ պարտիզանական պատերազմի, հասարակական համերաշխության ու համընդհանուր ներքին աջակցության»[254]: Դա իր հերթին վկայում է տեղական ինքնության և հասարակական շահի ընկալման մասին:

1776 թվականի հուլիսի 4-ին ընդունվեց Անկախության հռչակագիրը, որը սկիզբ դրեց Ամերիկայի Միացյալ Նահանգների ստեղծմանը և ամերիկյան ժողովրդավարության ու սահմանադրականության ձևավորմանը, ամերիկյան հասարակության վերակազմակերպմանը արխայիկ ավանդականից ժամանակակից իրավականի: Այս փաստաթուղթն իր ժամանակին ունեցել է հեղափոխական նշանակություն: Նախկին գաղութները ազատ ու անկախ նահանգներ հռչակելը նշանակում էր մարտահրավեր գոյություն ունեցող աշխարհակարգին, մետրոպոլիա-գաղութ հարաբերություններին ընդհանրապես: Ինչպես նշվում է ԱՄՆ բնակիչներին ուղղված Կոնգրեսի դիմումում՝ «Միապետությունից անցումը հանրապետության հիմնավորապես փոխում է մարդու դերը՝ մարդը հպատակից դառնում է ազատ քաղաքացի, ենթակայից՝ տեր, տեր իր երկրի և իր ճակատագրի»[255]: Հեղափոխություն էր կատարվում իշխանության մասին պատկերացումներում. անտիկ աշխարհի անկումից ի վեր առաջին անգամ իշխանության գերագույն կրող էր հռչակվում ժողովուրդը:

Ինչպես առաձին նահանգների, այնպես էլ Միացյալ Նահանգների սահմանադրության մեջ տեղ գտան ժողովրդի ինքնիշխանության նշանակալի մակարդակը երաշխավորող մի շարք սկզբունքներ:

Նշյալ սկզբունքները ներառում էին հետևյալ դրույթները՝ օրինական կառավարումը պահաջում է ժողովրդի համաձայնությունը, ժողովուրդն իրավունք ունի հեղափոխության ճանապարհով բռնապետական կառավարության տապալման, ռազմական իշխանությունը ենթակա է քաղաքացիական իշխանությանը, պետական կառավարման օրենսդիր, գործադիր ու դատական ոլորտների տարանջատում, կառավարության իշխանությունը սահմանափակվում է օրենքով, ինչպես նաև Վեբստերի նշած «իշխանության աշխարհագրական կենտրոնացվածության սահմանափակումը՝ տեղական կառավարություններին անկախության էական չափաբաժին ընձեռելու ճանապարհով»[256]:

Արդի իրավական հասարակության կառուցման ճանապարհին ահռելի նշանակություն ուներ կրթության գործը: Լուսավորության ոլորտին լուրջ աջակցություն էր ցուցաբերվում պետության կողմից: Լոյալիստներից բռնագանձված գումարի և հողի մի մասը անմիջականորեն օգտագործվում էր լուսավորական նպատակներով: Աշխարհիկ կրթության զարգացման միտում էր նկատվում, որը սկսում էր գերիշխել կրոնականին: Եթե մինչև 1776 թվականը կառուցված տասը քոլեջներից միայն մեկն էր աշխարհիկ, ապա հաջորդող երկու տասնամյակների ընթացքում արդեն հիմնվել էին 14 քոլեջներ, որոնցից միայն չորսն էր կրոնական հաստատություն:

Ամերիկացիները ձեռնամուխ եղան նոր հաստատություններ հիմնելու քաղաքականությանը՝ հիմնարկեք ստեղծելով իրենց անկախ պետականության համար: Հատկանշական է, որ Թոմաս Փայնը հանդիմանում էր թագավորական իշխանությանն այն մեղադրանքով, որ «միապետական կարգը թունավորում է պետությունը, իսկ թագը

[254] **Addams S.,** American Independence, New York, Barnes and Noble, 2012, p. 114.

[255] **An Address of the Congress, To The Inhabitants of the United States of America**, New York, Barnes and Noble, 2012, p. 54-65.

[256] **Webster N.,** An Examination into The Leading Principles of the Federal Constitution, New York, Barnes and Noble, 2012, p. 674.

կլանում հասարակությանը: Այդօրինակ կառավարմամբ երկրներում թագավորն ինքն է օրենքը, մինչդեռ ազատ երկրներում օրենքը պիտի լինի թագավոր»[257]:

Հռոմեական imperium populi-ն հազարամյա ընդմիջումից հետո Թոյնբիական քաղաքակրթական ալիքներով տեղափոխվեց ԱՄՆ, երբ նորանկախ գաղութները հաստատեցին իրենց նոր հանրապետական սահմանադրությունները՝ առանց թագավորի իշխանության: ԱՄՆ-ում անցումային պատմակարգն ավարտվեց, ինչը տեղի ունեցավ հատկապես լուսավորական շարժման և մտքի հեղափոխության հաղթանակի շնորհիվ:

Տերմինուսի տեսությունը **և ամերիկյան անցումային պատմակարգը**

Թեև Ամերիկայում լուսավորական շարժումը հիմնված էր եվրոպական լուսավորականության և եվրոպական դասական շրջանի մտածողների թողած ժառանգության վրա, այնուամենայնիվ ամերիկյան հեղափոխության գաղափարական նախապատրաստությունը և հասարակության մեջ անհրաժեշտ փոփոխությունները արվել են նաև ամերիկացի մտածողների ու մտավորական խմբակների գործունեության արդյունքում: Գործնական հեղափոխությանը նախորդել է մտքի հեղափոխությունը, որը առաջ է բերել հասարակության մեջ հիմնարար փոփոխություններ: Հեղափոխության հիմնասյուներն էին կրթությունը, աշխարհիկությունը, իրավունքը և կազմակերպվածությունը: Դրա առաջամարտիկներն այսօր հայտնի են իբրև ԱՄՆ հիմնադիր հայրեր: Իրենց հիմնարար սկզբունքները հիմնադիր հայրերը մեծապես ժառանգել են Ջոն Լոկից[258], որ ընդգծում էր «կառավարության պարտականությունը՝ անհատին ի բնե տրված իրավունքները պաշտպանելու հարցում»: Հիմնադիր հայրերն առաջ էին բերում ազատության, սեփականության, երջանկության իրավունքներ, որոնց պաշտպանության համար էլ հենց կառուցվում էր համակարգը: Ամերիկյան լուսավորականությունը գաղութային իրավունքների հռչակագրով ճանաչում էր այն փաստը, որ «ազատությունն ինքնին պատկանում է մարդուն, ու պետության իրավունքներն ու պարտականությունները պետք է ելնեն դրանից»[259]:

Մանրամասնելով, թե ում նկատի ունենք հիմնադիր հայրեր ասելով, նշենք այդ յոթ ականավոր գործիչների անունները՝ Ջորջ Վաշինգտոն՝ ԱՄՆ առաջին նախագահ, Ջոն Ադդամս՝ ԱՄՆ երկրորդ նախագահ, Ալեքսանդր Համիլտոն՝ ԱՄՆ դաշնային հոսանքի կուսակցության ղեկավար, Ջոն Ջեյ՝ բարձրագույն դատարանի առաջին նախագահ, Թոմաս Ջեֆֆերսոն՝ անկախության հռչակագրի հեղինակ, ԱՄՆ երրորդ նախագահ, Ջեյմս Մեդիսոն՝ ԱՄՆ չորրորդ նախագահ, սահմանադրության նշանավոր հեղինակներից, Բենջամին Ֆրանկլին՝ փիլիսոփա և Ամերիկյան հեղափոխության ու պետության մեծագույն գաղափարախոս:

Հիմնադիր հայրեր եզրույթը կիրառվում է և՛ նշյալ յոթ գործիչների, և՛ հարյուրից ավելի պետական այրերի համար[260], սակայն մեր ուսումնասիրության թեմայի շրջանակում ուշագրավ են վերոնշյալ յոթը:

Անդրադառնալով հեղափոխության և անցման ընկալման խնդրին՝ կարելի է նշել, որ հեղափոխության սկիզբ պետք է համարել ոչ թե Լեքսինգտոնը և Կոնկորդը, այլ դրանց նախորդած շուրջ 14 տարիների համահավաք գործընթացները: Հեղափոխությունը տեղի ունեցավ ոչ այնքան ռազմի դաշտում, որքան մարդկանց մտքում և վարքում՝ հասարակական դաշտում: Ամերիկացիների ինքնընկալման ու աշխարհընկալման, իշխանության հանդեպ վերաբերմունքի փոփոխությունը հասունացրեց և իրականություն դարձրեց հեղափոխությունը: Որպես դրա արդյունք՝ ամերիկացիները

---

[257] **Paine T.,** The American Crisis, New York, Barnes and Noble, 2012, p. 183.
[258] **Locke J.**, Two Treatises of Government, London, 1947, p. 3-16.
[259] **Declaration of Colonial Rights**, New York, Barnes and Noble, 2012, p. 65-69.
[260] **Быховской Б. Э.,** Американские просветители, т. 1, Москва, Мысль, 1968, С. 5-41.

դարձան ժամանակակից աշխարհի առաջին սահմանադրական հանրապետության քաղաքացիներ և ոչ թե միապետության հպատակներ: Մարդիկ վերագտան ինքնուրույնությունը և ստեղծեցին պետություն ու ազգային կառավարություն՝ սեփական կարիքները բավարարելու նպատակամղումով:

Մորգանը ամերիկյան հեղափոխությունը դիտարկում է որպես «մտավորական շարժում»[261], իսկ մտավորական շարժման հիմնական շարժիչը մտածող ու կրթված անհատն է: Այս առումով միանգամայն օրինաչափ է, որ ընտրախավը ձևավորվեց հենց այդպիսի մարդկանցից:

Ընտրախավը մշտապես կապված է իշխանության հետ: Այս առումով ուշագրավ է իշխանության նկատմամբ Մաքս Վեբերի մոտեցումը, որն իշխանությունը նույնացնում է մարդու՝ «ընկերային հարաբերություններում իր կամքը իրացնելու կարողության հետ»[262]: Ըստ էության, մտածողը իշխանությունը նույնացնում ու շաղկապում է անհատի կարողության և կամքի հիմնախնդրին: Այս պարագայում ամբողջությամբ տրամաբանական պիտի լինի, որ քաղաքական ու տնտեսական կարողությունների ու կամքի բավարար չափաբաժնի տիրապետող անձինք կամ նրանց խումբը լինեն իշխանության կրողը: Իշխանության օգտագործման ձևից ու բովանդակությունից էլ հենց կախված է իշխանություն իրացնողի տեղը ընտրախավի ու կեղծ ընտրախավի ոլորապտույտի մեջ:

Ըստ էության, ԱՄՆ-ում հրաշալիորեն պատկերացնում էին, որ նորաստեղծ համակարգը կայուն կլինի միայն, եթե քաղաքական ու տնտեսական ընտրախավի ու սովորական քաղաքացիների միջև հաստատվի փոխհամաձայնեցված գործողությունների կառուցակարգված համակարգ, երբ ընտրախավի ներսում ընթացող պայքարը կընթանա ընկերային աստիճանների կիրարկմամբ և երբ արտաքին ազդակի ու վճռորոշ գործոնի դերում հանդես կգա լայն հասարակական տարրը: Կ. Ռայթ Միլլսը «Ընտրախավի իշխանությունը» աշխատության մեջ գրում է. «Ամերիկայի Միացյալ Նահանգների իշխանության համակարգին հանդիպած մարտահրավերները չեն կարողացել վնասել հաստատությունների օրինակարգությանը: Արձանագրելի է, որ ԱՄՆ-ի իշխանական կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները գերազանցապես տեղի էին ունենում համակարգի ներսում հաստատութենական վերանայումներով ու փոփոխություններով»[263]: Ընտրախավերի *տերմինուսի տեսության* համաձայն՝ վերջիններս գտնվում են անվերջ փոփոխման շրջափուլի մեջ, և դրանց ընկերային կամ տնտեսական դերստանձնումները ունեն ժամանակավոր բնույթ: Ընդսմին, դրանց հիմքով հասարակական կառավարման համակարգ կառուցելը երկարաժամկետ լուծում չի կարող լինել : Սակայն այս անցումային պատմակարգի հերոսները գտել են նաև այդ խնդրի լուծումը՝ ընտրախավերի անվերջ փոփոխությունները ԱՄՆ-ում տեղավորելով միևնույն համակարգի ներսում: Համակարգ ասելիս առաջին հերթին նկատի ունենք իշխանության ճյուղերի փոխզսպման սկզբունքը, պարբերաբար կրկնվող համապետական ընտրությունները ու դրանց վրա կանգնեցված կառուցակարգերը: Ավանդույթը, օրենքը, պարբերաբար կրկնվող համապետական ընտրությունները և իշխանության ճյուղերի փոխզսպման սկզբունքն արդյունավետ համակարգում են իշխանության եկած նոր ընտրախավի գործունեությունը և բացառում արտահամակարգային փոփոխությունները՝ իրական ու գործուն մեխանիզմ ստեղծելով ընտրախավի այլասերման դեմ կամ այլասերման դեպքում՝ դրա ներհամակարգային փոխարինման համար:

---

[261] **Morgan E.,** The American Revolution Considered as an Intellectual Movement, In Paths Of American Thought, Boston, Houghton Mifflin, 1963, p. 11-33

[262] **Weber M.** Economy and Society. New York, New York Bedminster Press, 1968. Vol. 1., p. 53

[263] **Mills C.,** The Power Elite, Oxford, Oxford University press, 2000, p. 269-270.

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ ամերիկյան անցումային պատմակարգը հարաբերականորեն կարճ ժամանակահատվածում կարողացավ լուծել իր առջև դրված խնդիրները և անցում կատարել համակարգայնացված, ազատական և արդի նոր տիպի հասարակական ձևաչափի: Ընտրախավերի *տերմինուսի տեսության* համաձայն՝ հին ընտրախավը աստիճանաբար վերածվեց կեղծ ընտրախավի և անցումային պատմակարգում հայտնվելով՝ իր տեղը զիջեց նոր ընտրախավին, որը և կառուցեց նոր տիպի հասարակություն:

Պետական կառավարման համակարգն ու հասարակական համակեցության սկզբունքներն էլ կառուցվեցին այնպես, որ կարողանան պարառել *տերմինուսի տեսության* շրջափուլային տատանումները՝ դրանք դարձնելով ներհամակարգային ֆենոմեններ:

TERMINUS ELITE THEORY IN THE CONTEXT OF AMERICAN TRANSITION FORMATION

AREG KOCHINYAN
Yerevan State University, Faculty of History,
Chair of World History, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia

The purpose of the article is to give a description of an elite as well as its public institutions and processes being in the transition formation within the framework of the Terminus elite theory in an interdisciplinary format based on a specific example.

Our task is to reveal the feature of American transition formation, describe the guarantees of the creation of a modern, democratic and legal state as a result, identify the role of Terminus theory in the above mentioned.

In the course of the study, both scientific (abstraction, analysis, synthesis, deductive and inductive research) and special (historical research, local application of Toynbee civilizational waves, comparative analysis) methods were applied.

As a result of the study, the following conclusion was formed: during its normal development, the society is always in a closed circle of shifts of elites - the Terminus shifts.

These shifts usually take place in transition formations. The American revolution is one of those phenomena, that results into the creation of an unprecedented system of public administration and qualitatively new form of social coexistence, which in their turn already provide a new, intra-system type of shifts.

Key words: *Elite, Terminus, USA, Revolution, Fake Elite, Colony, Independence, Transition, Formation.*

ТЕОРИЯ ЭЛИТ ТЕРМИНУС В КОНТЕКСТЕ АМЕРИКАНСКОЙ ПЕРЕХОДНОЙ ФОРМАЦИИ

АРЕГ КОЧИНЯН
аспирант кафедры всемирной истории
исторического факультета
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения

Цель статьи – на конкретном примере и в междисциплинарном формате в рамках теории элит Терминус дать описание элиты (ее общественных институтов и процессов), находящейся в переходном сотоянии.

Наша задача – раскрыть особенности американской переходной системы, описать гарантированные предпосылки создания в результате ее реализации современного, демократического, правового государства и в этом контекстеопределить роль теории Терминус.

В ходе работы были применены как научные (абстракция, анализ, синтез, дедуктивное и индуктивное исследование), так и специальные (историческое исследование, локальное применение Тойнбиевских волн цивилизаций, сравнительный анализ) методы.

В результате исследования было сформировано следующее заключение: общество в процессе своего естественного развития всегда находится в замкнутом круге сдвигов элит, которые принято обозначать как Терминусные сдвиги. Эти сдвиги обычно происходят в переходных формациях, и американская революция является одной из них. В результате этого создается беспрецедентная система государственного управления и качественно новая форма социального сосуществования, которая, в свою очередь, обеспечивает новую, периодически сменяющуюся внутрисистемную формацию.

Ключевые слова: *элита, Терминус, США, революция, ложная элита, колония, независимость, переход, формация.*